

Հուլիսի 5-ը ՀՀ Սահմանադրության օրն է



Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքներն ու համազգային նպատակները, ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը՝ նվիրված հայրենիքի հզորացմանն ու բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով

հավատարմությունը համամարդկային արժեքներին, 1995 թ. հուլիսի 5-ին հանրաքվեով ընդունեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:

Սահմանադրությունը պետության հիմնական օրենքն է, որը սահմանում է տվյալ երկրի քաղաքական, իրավական, տնտեսական հիմունքները: Այն օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով: Սահմանադրությունը սահմանում է պետության հիմնական մարմինների ստեղծման եղանակը, նրանց փոխհարաբերությունները, լիազորությունների շրջանակը, անհատի իրավունքներն ու պարտականությունները, իշխանության մարմինների կազմավորման, գործունեության կարգը, ընտրական համակարգի սկզբունքները, պետական գործունեության մեջ քաղաքացիների մասնակցության կարգը:

Սահմանադրություններն առաջացել են բուրժուազիայի կողմից քաղաքական իշխանությունը նվաճելուն զուգընթաց՝ XVII-XVIII դարերում: Եվրոպայում առաջին Սահմանադրությունն ընդունվել է 1791-ին, իսկ ԱՄՆ-ում՝ 1787-ին:

Հայ իրականության մեջ Սահմանադրության առաջին նախագիծը «Որոգայթ փառացն» էր (1773թ.), որը նախատեսվել էր թուրք-պարսկական բռնակալությունից Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանի համար: Հաջորդ փաստաթուղթը կոչվում էր «Ազգային սահմանադրություն» (1863թ.), որով թուրքահայերին պետք է տրվեր ինքնավարություն՝ իրենց ազգային ներքին գործերը (հիմնականում՝ կրթական, եկեղեցական) տնօրինելու համար: Խորհրդային Հայաստանում առաջին Սահմանադրությունն ընդունվել է 1922 թվականին:

«Որոգայթ փառաց»

«Որոգայթ փառացը» սահմանադրական հանրապետության առաջին նախագիծն էր հայ իրականության մեջ: Այն շարադրել է Շահամիր Շահամիրյանը արևմտաեվրոպական լուսավորական գաղափարների ազդեցությամբ:

«Որոգայթ փառացը» հրատարակվել է Մադրասում Շ. Շահամիրյանի որդի Հակոբի անունով 1788-89 թվականներին (տիտղոսաթերթին նշված է 1773 թ.): Ընդարձակ առաջաբանում դատապարտվում են ավատատիրական-միապետական կարգերը, հիմնավորվում է թուրք-պարսկական

բռնակալությունից Հայաստանի ազատագրման ուղիները և այնտեղ բուրժուադեմոկրատական կարգերի հաստատման սկզբունքները:

Գրքի երկրորդ՝ բուն մասը Սահմանադրության նախագիծն է (521 հոդված), որը ներկայացնում է ապագա անկախ Հայաստանի հասարակական-պետական կառուցվածքը, կառավարման մարմինների ստեղծման կարգը, նրանց իրավասությունները, քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները, տնտեսության, լուսավորության, զինված ուժերի կազմակերպման հարցերը և այլն: «Որոգայթ փառաց»-ուն ապագա հանրապետության բոլոր քաղաքացիներն օրենքի առաջ հավասար էին հռչակվում, վերացվում էին դասային աստիճանավորումները: Նրանք ունենալու էին խոսքի, դավանանքի, անձի և գործունեության լիակատար ազատություն: Սակայն բոլոր պաշտոնները վարելու էին լուսավորչական հայերը: Հողի սեփականատեր կարող էին լինել դարձյալ նրանք, իսկ այլադավաններն ու այլազգիները կունենային միայն հողի վարձակալման իրավունք: Ընտրվելու իրավունքը սահմանափակվելու էր սոսկ բարոյական հատկանիշներով: Պատգամավորները (փոխանորդներ) ընտրվելու էին 3 տարով:



Կառավարման մարմինները (զինապետություն, կերակրապետություն, գանձապետություն և այլն) ընտրվելու էին պատգամավորներից: Գերագույն և օրենսդիր իշխանությունն իրականացնելու էր Հայոց տունը (խորհրդարան), գործադիր իշխանությունը՝ Նախարարությունը (նախարարների խորհուրդ):

Հայոց տունն ունենալու էր իր նախագահությունը կազմված 14 տասուտերից: Նախարարությունը բաղկացած էր լինելու նախարարից (նախագահ) և 12 տեղակալից: Նախարարը համարվում էր նաև երկրի արտաքին գործերի նախարար և զինված ուժերի գերագույն հրամանատար: Հայոց տունը հսկելու էր Նախարարության գործունեությունը և իրավունք ուներ փոխելու օրինախախտ կառավարությունը: Քաղաքական նկատառումով նախագծում առաջարկվում էր նախարար ընտրելու մեկ այլ՝ բացառիկ տարբերակ. հին հայկական արքայատների, մասնավորապես՝ Բագրատունիների շառավիղներից մեկն իր ցանկությամբ կարող էր ընտրվել ցմահ նախարար, եթե հավատարիմ ու հնազանդ մնար Հայոց տան սահմանած օրենքներին: Նախագծում տրված են կառավարման այլ մարմինների, դատարանների կազմակերպման կարգը, դրանց կառուցվածքն ու իրավասությունները: Հիմնվելու էին (ընտրությամբ) Մայր կամ Բարձրագույն դատարան, տեղերում՝ մնայուն, քրեական գործերի համար՝ երդվյալների դատարաններ: Ղատավարությունն ընթանալու էր գրավոր, մեղադրյալն ունենալու էր դատապաշտպան: Բազմաթիվ հոդվածներ նվիրված են լուսավորության, տնտեսության զարգացման հարցերին, ընտանեկան հարաբերություններին և այլն: Եկեղեցին բաժանվելու էր պետությունից, դպրոցը՝ եկեղեցուց: Կրթությունը բոլոր քաղաքացիների համար դառնալու էր պարտադիր՝ առանց սեռի տարբերության: Կարիքավորների, որբերի կրթությունն ու բժշկությունը

հոգալու էր պետությունը: Հանրապետության գլխավոր նեցուկը դիտվում էր մշտական զորաբանակը (90 հազար զինվոր), որը համալրվելու էր վիճակահանությամբ (100 տղամարդուց՝ 5-ը, ռազմական ուսուցումն ու ծառայությունը՝ 7 տարի):

«Ազգային սահմանադրություն»

«Ազգային սահմանադրությունը» արևմտահայերի ներքին կյանքին վերաբերող կանոնադրություն է: Այն ընդունել է Կ.Պոլսի Ազգային ժողովը 1860 թվականի մայիսի 24-ին, և վավերացրել է սուլթանական կառավարությունը 1863-ի մարտի 17-ին՝ «Հայոց ազգի կանոնադրություն» («Նիզամնամեի միլլեթի էրմանիան») վերտառությամբ: Թուրքիայի սուլթանական-խալիֆայական իշխանությունը հպատակ քրիստոնյա ժողովուրդներին ճանաչում էր ոչ թե որպես «ազգ» կամ «ժողովուրդ», այլ՝ եկեղեցական-կրոնական համայնքներ, որոնց գլխավորում էին կրոնապետ պատրիարքները: Նրանց ազգի ներքին գործերը տնօրինելու լայն իրավասություն էր արտոնված: XIX դ. 40-50-ական թվականներին Ֆրանսիա ուսումնառության մեկնած մի խումբ հայ երիտասարդներ, ովքեր մասնակցել էին 1848-ի ֆրանսիական հեղափոխությանն ու ներշնչվել նրա գաղափարներով, վերադառնալով Կ.Պոլիս, տեղի դեմոկրատական ուժերի հետ ծրագրեցին, առանց արյունահեղության, ազգի ներքին գործերի կարգավորման դեկը վերցնել իրենց ձեռքը: 1853-ին Ազգային հոգևոր և Գերագույն ժողովների համաձայնությամբ կազմվեց «Ուսումնական խորհուրդ» որի անդամներ Ն.Ռուսինյանը, Գ. Օտյանը, Ն. Պալյանը, Ս. Վիչենյանը (Սերվիչեն), Կ. Ությունյանը, Մկրտիչ Աղաթոնը և Գրիգոր Աղաթոնը մշակեցին ազգային, մշակութային և հասարակական կյանքին վերաբերող կանոնադրություն (1857): Այն կազմվեց Բելգիայի Սահմանադրության սկզբունքով և կրում էր ֆրանսիական հեղափոխության ազդեցությունը: Կանոնադրության նախագծի քննարկումն ընթացավ առաջադիմականների և կղերաամիրայականների սուր պայքարի մթնոլորտում: Քանիցս մերժվելուց ու փոփոխվելուց հետո, ի վերջո, 1860-ի մայիսի 24-ին Ազգային ժողովն ընդունեց և հաստատեց կանոնադրությունը, որը Ն. Ռուսինյանի առաջարկով անվանվեց «Ազգային սահմանադրություն»: Կառավարությունը կրճատեց «Ազգային սահմանադրությունը» և դրանից հետո միայն վավերացնելով 1863-ի մարտի 17-ին տվեց գործադրելու իրավունք:

Իր թերություններով հանդերձ՝ «Ազգային սահմանադրությունը» պատմական ուշագրավ երևույթ էր, որի գոյությունը, ցավոք, Թուրքիայում կարճատև եղավ: Այն չնչին փոփոխություններով գործադրվեց մինչև 1896-ը, արգելվեց Աբդուլ Համիդ երկրորդի հրամանով, ապա կրկին արտոնվեց 1908-ին և 1915-ին վերջնականապես դադարեց գործելուց:

ՀՍՄՀ առաջին Սահմանադրություն

ՀՍՄՀ առաջին Սահմանադրությունն ընդունվել է 1922-ի փետրվարի 3-ին ՀՍՄՀ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների սովետների I համագումարում: Սովետական Հայաստանն այդ Սահմանադրությամբ հռչակվեց ունիտար պետություն, սահմանվեցին պետական բարձրագույն մարմինները, դրանց կազմակերպման ու

գործունեության սկզբունքները, ճանաչվեց խորհրդային օրենսդրությունը և այլն: ՍՍՐՄ-ի և Անդրֆեդերացիայի կազմավորումից հետո ՀՍՍՀ Սահմանադրությունը փոփոխվեց և լրացվեց:

1937-ի մարտի 23-ին ՀՍՍՀ սովետների IX արտակարգ համագումարում ընդունվեց նոր Սահմանադրություն: ՀՍՍՀ IX գումարման Գերագույն սովետի արտահերթ նստաշրջանում ընդունված Սահմանադրությունը ուժի մեջ մտավ 1978 թ. ապրիլի 14-ից:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Շարունակվում է «Քաղաքացիական ծառայություն» շաբաթաթերթի բաժանորդագրությունը:

Բաժնեգինն է՝

3 ամիսը՝ 1250 դրամ,

6 ամիսը՝ 2500 դրամ,

12 ամիսը՝ 5000 դրամ:

Դասիչ՝ 77794

Բաժանորդագրությունը կատարվում է «Հայմամուլ» գործակալության, «Հայփոստ» ՓԲԸ-ի բաժանմունքներում, ՀՀ քաղաքացիական ծառայության համապատասխան մարմինների աշխատակազմերում, թերթի խմբագրությունում: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 54-11-38, 54-48-42 հեռախոսահամարներով, իսկ առաքման հարցով՝ 53-47-66 («Հայփոստ»), 58-94-12 («Հայմամուլ»):

ՔԱՂԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համալրվում է քաղծառայության համակարգը

Քաղաքացիական ծառայության համակարգի ներդրումից հետո առաջօր հայտարարվել է ավելի քան 1540 թափուր պաշտոնների զբաղեցման մրցույթ, որոնց մասնակցելու հայտ ներկայացրած քաղաքացիների թիվը մոտենում է 10000-ի սահմանագծին:

2004 թ. առաջին կիսամյակում հայտարարվել է ավելի քան 542 թափուր պաշտոնի մրցույթներ, որոնցից 262-ը՝ բարձրագույն և գլխավոր, մյուսները՝ առաջատար և կրտսեր պաշտոնների համար: Հայտարարված մրցույթներից կայացել է մոտ 450-ը, որոնց մասնակցել է 2250-ից ավելի քաղաքացի: Նրանցից 981-ը մրցույթների արդյունքում ճանաչվել է հաղթող:

Ամենաշատ թափուր տեղերն առաջացել են բարձրագույն և գլխավոր պաշտոններում, որոնց համար հայտարարվել և անցկացվել է շուրջ 580 մրցույթ: Թեև ամենաքիչ թափուր պաշտոններ առաջացել են կրտսեր պաշտոնների խմբերում, սակայն ամենաշատ դիմորդները գրանցվել են հենց այդ խմբի թափուր պաշտոնների մրցույթներում:

Մրցութային գործընթացին զուգահեռ՝ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը կազմակերպում է նաև քաղծառայողների առաջին վերապատրաստումն ու ատեստավորումը: Մինչև հուլիսի 10-ը իրենց առաջին վերապատրաստումն ավարտած կլինի ավելի քան 4000 քաղծառայող: Այս գործընթացն անցկացվում է հայտ ներկայացրած ութ ուսումնական հաստատություններում: Քաղաքացիական ծառայողների առաջին վերապատրաստումը կավարտվի 2005 թվականին: Գործընթացի նպատակն է քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործումը:

Առաջին վերապատրաստմանը հաջորդում է քաղաքացիական ծառայողների առաջին ատեստավորումը: Վերջինիս նպատակն է զբաղեցրած պաշտոնին քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և ունակությունների համապատասխանության որոշումը: Վերջին տվյալներով ատեստավորվել է վերապատրաստված քաղծառայողներից 2610-ը: Նրանցից 1080-ը բարձրագույն և գլխավոր, մյուսները առաջատար և կրտսեր քաղաքացիական ծառայողներ են: 164 քաղծառայող, ըստ ատեստավորման հանձնաժողովների կայացրած որոշումների, չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոններին: Նրանք ազատվում են զբաղեցրած պաշտոններից, որոնց համար հայտարարվում են մրցույթներ:

ՀՀ ՔԾ խորհուրդն իր իրավասության շրջանակներում ուսումնասիրություններ է իրականացնում համակարգում ընդգրկված պետական մարմիններում, առանձին դեպքերի հետ կապված անցկացնում է ծառայողական քննություններ:

Ելնելով «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարված վերջին փոփոխություններից ու լրացումներից՝ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը փոփոխություններ ու լրացումներ կատարեց նաև համակարգի բնականոն գործունեությունն ապահովող մի շարք ենթաօրենսդրական ակտերում, որոնց հիմնական նպատակն է բարձրացնել համակարգի թափանցիկության ու անաչառության մակարդակը:

ՀՀ ՔԾ ԽՈՐՀՈՒՐԴ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀՀ կառավարությունը հաստատել է սոցիալական քարտերի և դրանց համարների կիրառման կարգը: Հանձնարարվել է որոշմամբ սահմանված տեղեկատվական բազաների միջև տվյալների փոխանակությունն իրականացնել սոցիալական քարտերի համարների միջոցով՝ 2005 թվականի հունվարի 1-ից:

2004 թվականի հուլիսի 1-ից մինչ 2005 թվականի հունվարի 1-ը որևէ քաղաքացու չեն կարող զրկել աշխատավարձից, կենսաթոշակից, նպաստից՝ սոցիալական քարտ չունենալու պատճառով:

Մայր Աթոռը հորդորում է տուրք չտալ նախապաշարումներին

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում վերջերս տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի և Հայաստանի եպիսկոպոսների ու թեմակալ առաջնորդների միացյալ ժողով: Ժողովը քննության առավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քարոզչական առաքելությանը, կանոնական, թեմական կյանքին առնչվող հարցեր:



Նկատի առնելով նաև հավատացյալների շրջանում շարունակվող անհանգստությունները՝ մասնավոր ուշադրությամբ քննության առնվեցին Հայաստանի Հանրապետությունում ներդրվող սոցիալական քարտերի համակարգի հետ կապված հարցեր և, որոնք նախապես

քննարկվել էին նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոնի աշխատակիցների և հանրության ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքին:

Ժողովը վերահաստատելով մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիրքորոշումը՝ արձանագրեց.

Սուրբգրային Հայտնությամբ և եկեղեցու ուղղափառ հայրերի սրբազան ուսուցումների լույսի ներքո բացառելի է սոցիալական քարտի համարի որևէ առնչում «Նեռի դրոշմին»: Հայաստանի Հանրապետությունում ներդրվող սոցիալական ապահովության քարտերի համակարգը վտանգ չի պարունակում անձի հոգու փրկության առումով, քանզի Աստված և մարդ հարաբերությունները հոգևոր աննյութական աղերս են: «Հոգի է Աստված, և Նրան երկրպագողները պետք է հոգով և ճշմարտությամբ երկրպագեն (Հովհ. 4:24):

Այսուհանդերձ, նկատի առնելով հանրության մեջ եղած տարակուսանքները՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջնորդությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ բացառվել է «6» թվի երեք անգամ հաջորդական կրկնությունը սոցիալական ապահովության քարտերի համարներում և գծիկավոր պայմանանշաններում, որով նմանօրինակ փաստի արձանագրումն առաջացնում է քրեական պատասխանատվություն:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հորդորում է հավատավոր իր հոտին՝ տուրք չտալ նախապաշարումներին, այլ Տիրոջ Խաչի ապավինությամբ, զորացած հավատքով շարունակել իր կյանքը՝ ի շինություն մեր երկրի և ի պայծառություն Առաքելական մեր Սուրբ եկեղեցու:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
տեղեկատվական համակարգ

ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐ

Դեռևս հնագույն ժամանակներում Հայաստանում գոյություն է ունեցել պետական կառավարման որոշակի հայեցակարգ, իսկ առանձին խոշոր մտածողներ փորձել են մշակել պետության կառավարման իրավական հիմունքներ:

Պատմական Հայաստանում պետական կառավարումը միապետական բնույթ ուներ: Պետական ապարատի գլուխ կանգնած էր թագավորը, ում իշխանությունը ժառանգական էր. հորից անցնում էր որդուն: Այդ սովորույթը դրսևորվում էր արդեն Ք.ա. IV-III դարերում Երվանդունի թագավորների օրոք և իր արմատներով խորանում է մինչև Աքեմենյանների տիրապետության ու նախաաքեմենյան շրջանները...:

Երկիրը կառավարելու համար թագավորն ուներ օրենսդրական ու գործադիր լայն լիազորություններ ներքին և արտաքին քաղաքականության բնագավառներում: Նա ինքն էր իրավունքի աղբյուրը. կարող էր գործել ավանդական կամ պետության կողմից սահմանված օրենքներով ու կանոններով, կարող էր վերանայել դրանք ու սահմանել նորերը: Ըստ Մ. Խորենացու՝ Հայոց արքա Վաղարշակը «...իր թագավորական տանը օրենքներ է հաստատում, ժամեր է սահմանում (արթունիք) մտնելու և իջնելու, խորհրդի, կերուխումի և զբոսանքների համար: Սահմանում է զինվորական կարգեր՝ առաջին, երկրորդ, երրորդ և այլն...Սահմանում է իրավարարներ արքունի տանը, իրավարարներ քաղաքներում և ավաններում»: Ըստ նույն աղբյուրի՝ թագավորը «...իրեն զինված թիկնապահներ է նշանակում Հայկազն Խոռի սերնդից, ընտիր և քաջ նիզակավոր և սուսերավոր մարդկանց, և նրանց նախարարության գլուխ է նշանակում Մաղխազ անունով մի բարի ու սրտոտ մարդու...»:



Ուշագրավ է, որ դեռևս V դարում (488թ.) Աղվանից արքա Վաչագանը վավերացրել է «Կանոնական սահմանադրությունը»՝ բաղկացած ներածությունից, 21 հատվածից և վերջաբանից, որով կանոնակարգվել են երկրում ժողովրդի և հոգևոր դասի իրավունքներն ու պարտականությունները, հարկային և քաղաքացիական իրավահարաբերությունները:

Ըստ պատմական աղբյուրների՝ արտաքին քաղաքականությունը վարում էր թագավորը, լուծում էր պատերազմի, հաշտության, դաշնագրերի

կնքման հարցերը: Նա իրավասու էր հիմնադրել քաղաքներ, անվանակոչել դրանք, երկրի զինված ուժերի գլխավոր հրամանատարն էր, ղեկավարում էր ներքին կյանքի բոլոր բնագավառները:

Պետական կառավարման շտաբային (խորհրդատվական) մարմին էր արքունիքը, որը բաղկացած էր թագավորի անմիջական շրջապատի մարդկանցից, հատկապես՝ հարազատներից, մեծատոհմիկ և նորելուկ ավագանու բարձր խավի ներկայացուցիչներից: Յուրօրինակ խորհրդատվական մարմին էր «Աշխարհաժողովը», որը «տարվա որոշ ժամանակներին հրավիրվում էր Հայոց թագավորի նախաձեռնությամբ», որին նախարարների և այլ իշխանների հետ միասին մասնակցում էր «գյուղական համայնքների վերնախավը»: Ըստ հայ մատենագիրների տեղեկությունների՝ «Աշխարհաժողովը» սովորաբար հրավիրվում էր Ծաղկոտն գավառում՝ Նպատ լեռան մոտակայքում, և Շահապիվանում՝ որպես հայ ավագանու բարձրագույն խորհրդակցական մարմին: Գործառույթային կառավարումն իրագործվում էր գործակալությունների միջոցով: Դրանց մի մասը հիմնական էր՝ Հազարապետությունը, Մաղխագությունը (թագավորի անձնական թիկնապահ), Հայրությունը (Հայոց արքունիքի և արքունիքի կալվածքների վերակացու), Մեծն դատավարությունը, Սպարապետությունը, դրանցից բացի գոյություն ունեին նաև երկրորդական գործակալություններ:

Հազարապետությունը դիտվում էր պետության գլխավոր գործակալություններից մեկը, որին ենթարկվում էին բոլոր գյուղական համայնքները, կառավարում էր ֆինանսների, այդ թվում՝ հարկահանության, ինչպես նաև ռազմական գործը:

Մաղխագությունն արժանի թիկնապահների գործակալությունն էր:

Սարդապետությունը գործակալություն էր, որի գործառույթներից էին արքունիքի վերակացությունը, թագավորական կալվածքների ու գանձերի վերահսկողությունը:

Մեծն դատավարության գործակալությունը քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո գլխավորել է Ամենայն հայոց կաթողիկոսը: Սպարապետությունն առաջացել է երկրորդ դարի վերջին: Մինչև այդ ռազմական գործը ղեկավարում էր հազարապետը, իսկ «Սպարապետ Հայոցը» համարվում էր Մեծ Հայքի թագավորության զորական ուժերի գերագույն հրամանատարը:

Որպես կանոն՝ գործակալությունները գլխավորում էին բարձր ավագանու ամենաազդեցիկ ներկայացուցիչները, իսկ պաշտոնավարումը ժառանգական բնույթ ուներ:

Մեծ Հայքի թագավորության տարածքը բաղկացած էր 124 գավառից, որոնք ընդգրկված էին 22 կողմնակալությունների (ստրատեգիաների) և արքունի տան՝ ոստանի մեջ: Յուրաքանչյուր կողմնակալություն (կամ «աշխարհ») ուներ իր կառավարիչը (կուսակալը, բղեշխը), ում սկզբնական շրջանում նշանակում էր թագավորը, իսկ հետագայում այդ պաշտոնը դառնում էր տվյալ տոհմի ժառանգական արտոնությունը: Մ.Խորենացին փաստում է, որ թագավորը «Շարաշանին, որ Սանասարի տնից էր (ծագում), մեծ բղեշխ և կուսակալ է նշանակում արևմտյան հարավում՝ Ասորեստանի սահմաններին մոտ, Տիգրիս գետի ափին...»: Ի սկզբանե նախարար կոչվում էին գավառների՝ թագավորի կողմից նշանակված կառավարիչները, սակայն հետագայում

նախարարի պաշտոնը դարձավ տոհմական ժառանգություն, գավառը՝ տոհմի ժառանգական սեփականություն: Այդպես առաջացան նախարարական տոհմերը:

Քաղաքները Մեծ Հայքում կառավարում էին թագավորի կողմից նշանակված կառավարիչները (քաղաքի վերակացու), բացի այդ՝ գոյություն է ունեցել նաև քաղաքի կառավարման խորհրդակցական մարմին: Օրինակ՝ ըստ Մ. Խորենացու՝ Տիգրանակերտ քաղաքի վերակացուն Արշակ «Բ» թագավորի աներհայրն էր՝ Սյունյաց Անտիոք նահապետը: Գյուղական համայնքները կառավարում էին համայնքների նշանակված ղեկավարները՝ որպես պետական վարչական ապարատի ստորին օղակներ: Ընդ որում՝ խոշոր քաղաքներն ինքնուրույն էին, փոքրերը մտնում էին ստրատեգիաների մեջ. դրանց մեջ էին մտնում նաև գյուղական համայնքները, իսկ որոշ գյուղեր գտնվում էին քաղաքների տարածքներում:

Մինչև XIV դարը նախարարությունները պետական կառավարման կարևորագույն օղակներից էին: Յուրաքանչյուր նախարար ոչ միայն խոշոր հողատեր էր, այլև որոշակի տարածաշրջանի կառավարիչ (տարածքային կառավարման մարմին): Միաժամանակ նրանք իրավասու էին վարել պետական պաշտոններ՝ գործակալություններ (սպարապետ, մարդպետ, մաղխագ): Նախարարներն իրենց տիրույթներում ունեին հարկային, դատական, վարչական իրավունքներ, զորք, բերդեր:

Գործակալություններն իրենց բնույթով գործառութային կառավարման մարմիններն էին և լիազորված էին կառավարելու իրենց վերապահված ոլորտները (ազգային պաշտպանություն, տնտեսություն): Այսպիսով, պետական կառավարման համակարգը բաղկացած էր միապետից, արքունիքից (աշխարհաժողովից), գործառութային և տարածքային կառավարման մարմիններից, ինչպես նաև դատական իշխանության մարմնից: Հայ առաքելական եկեղեցուն վերապահված էր հոգևոր զարգացման, կրթության, մասամբ դատական գործը (ինչպես նշվել է, դատական իշխանության իրավասություններով օժտված էին նաև նախարարներն իրենց կալվածքներում), իսկ հայկական պետության վերացումից հետո՝ նաև օրենսդրական և դատական գործունեությունն ամբողջությամբ:

Ուշագրավ է, որ Հայ առաքելական եկեղեցու կառավարման կազմակերպական կառուցվածքն իր գոյության ավելի քան 17 դարերի ընթացքում էական փոփոխություններ չի կրել, ինչը վկայում է դրա նպատակային հիմնավորվածության մասին:

Հայաստանում թագավորական իշխանության անկումից հետո (428թ.) թե՛ Պարսկաստանին ենթակա հատվածում և թե՛ Բյուզանդիայի տիրապետության տակ հայտնված մասում պահպանվել են հայկական պետականության որոշ բեկորներ: Իրենց կալվածքներում նախարարները շարունակում էին իշխել՝ ունենալով լիազորություններ, զորք, հարաբերական անկախություն: Պարսից արքունիքը Հայաստանի՝ իր ենթակայության հատվածում, որը Սասանյան պետության վարչական միավորներից մեկն էր, նշանակել էր մարզպան: Եկեղեցին շարունակում էր ղեկավարել Մեծն դատավարության գործակալությունը: Որպես Հայոց մարզպանության գլխավոր գործակալություններ՝ շարունակում էին գործել Հազարապետությունն ու Սպարապետությունը: Հազարապետն զբաղվում էր

հարկահավաքման, պետական շինարարության խնդիրներով, իսկ սպարապետը՝ ռազմական գործով: Անշուշտ, կառավարման բոլոր մարմինները գործում էին Պարսից արքունիքի հսկողության ներքո և նրա կողմից սահմանված լիազորությունների շրջանակներում:

Միառժամանակ՝ մինչև 536 թվականը, Բյուզանդական Յայաստանում նույնպես պահպանվեցին հայ նախարարների՝ սատրապների ժառանգական իրավասությունները, այնուհետև տիրապետող էր կայսրության կառավարման համակարգը, իսկ նրանց քաղաքական և ռազմական իշխանությունը վերացավ:

VII դարի ընթացքում, ըստ պատմական աղբյուրների, Յայաստանը կառավարում էր Յայոց իշխանը, թեև երկիրը գտնվում էր Բյուզանդիայի կամ Արաբական խալիֆայության ազդեցության ոլորտում: Նա անկախ տիրակալ էր, բայց նրա իշխանությունը ժառանգական չէր: Եկեղեցին, հատկապես կաթողիկոսը և նախարարները մասնակցում էին երկրի կառավարմանը: Գործում էին Սպարապետության և Յազարապետության գործակալությունները: VII դարի վերջից սկսած՝ արաբները սահմանափակեցին Յայոց իշխանի լիազորությունները: Եթե Յայոց մարզպանն անմիջականորեն ենթարկվում էր Պարսից արքային, ապա Յայոց իշխանը՝ ոստիկանին, ոչ թե խալիֆային:

Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանում (885-1045թթ.) պետության գլխավորը թագավորն էր (միապետը), ում իշխանությունը, ինչպես Մեծ Յայքում, ժառանգական բնույթ ուներ: Թեև պետական կառավարումը հիմնականում կրում էր Յայոց պետականության նախընթաց շրջանի ավանդույթներն ու բնորոշ գծերը, սակայն, ի տարբերություն Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանի, բնութագրվում էր որոշ առանձնահատկություններով: Բագրատունիները պահպանեցին ոչ հեռու անցյալի մի շարք պաշտոնների անունները՝ մարզպան, իշխանաց իշխան, նրանց բավական հարազատ էին իրանաարաբական միջավայրից փոխառված «շահնշահ» և «ոստիկան» տիտղոսները:

Իշխանաց իշխանը համարվում էր Յայոց թագավորի ներկայացուցիչը, նրա փոխանորդը: Այդ պաշտոնն իր լիազորություններով նման էր Արշակունյաց ժամանակաշրջանի հազարապետին. իշխանաց իշխանը ղեկավարում էր բոլոր գավառապետ բերդապահ իշխաններին, քաղաքապետերին: Նա էր զբաղվում հարկերի հավաքման գործով, իսկ պատերազմի դեպքում սպարապետների հետ միասին գլխավորում էր հայոց զորքը:

Երկրի կառավարման գործում զգալի էր եկեղեցու դերը, իսկ Բագրատունի թագավորները ձգտում էին ամրապնդել Յայոց հոգևոր կենտրոնը:

Սպարապետը՝ իբրև հայկական զորքի իրամանատար, թագավորից հետո պետության մեջ երկրորդ պաշտոնյան էր, և մեծ մասամբ այդ պաշտոնն զբաղեցնում էին թագավորական ընտանիքի անդամները:

Ուշագրավ է, որ նահանգների ու գավառների կառավարման գործում էական էր փոքր թագավորությունների (Վասպուրական, Կարս, Սյունյաց աշխարհ, Տաշիր-Չորագետ) տիրակալների կամ գավառական թագավորների դերը, իսկ բուն թագավորական կալվածքները կառավարում էին Յայոց թագավորի նշանակած գավառապետ իշխանները: Գավառական

թագավորները նույնպես իրենց իշխանության հաստատումը ստանում էին Բագրատունի թագավորներից:

Հասարակական-տնտեսական համակարգերի, այդ թվում՝ պետական կառավարման հիմքը օրենսդրական դաշտն է: Ինչպես նշվել է, Հայոց թագավորները իրականացրել են ոչ միայն գործադիր, այլև օրենսդիր գործառույթներ:


Շարունակելի

ՔԱՂԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐՏԵՐԿՐՈՒԽ

Չինաստանի ժողովրդական Հանրապետության քաղաքացիական ծառայության համակարգը

Չինաստանի ժողովրդական Հանրապետության քաղաքացիական ծառայության համակարգի ձևավորման գործում որոշիչ դեր են կատարել ՉԺՀ տնտեսական և քաղաքական համակարգերը: Չինաստանի քաղաքական համակարգը ղեկավարում է կոմունիստական կուսակցությունը:

Վերջին 45 տարիների ընթացքում Չինաստանում գերիշխել է միայն հանրային կամ հավաքական սեկտորը /չկար մասնավոր սեկտոր/, որտեղ ընդգրկված բոլոր քաղաքացիական ծառայողները համարվում էին հանրային ծառայողներ: 1996 թ. Չինաստանում հանրային ծառայողների թիվը կազմում էր 80 մլն մարդ՝ ամբողջ բնակչության թվի 6.7 %-ը: Բնական է, որ սա բավական ցածր ցուցանիշ է հատկապես կենտրոնացված, պլանավորված տնտեսության համար:



Ի տարբերություն մյուս երկրների՝ Չինաստանում քաղաքական գործիչների և քաղծառայողների միջև տարբերություն չի դրվում: Ամենաբարձր պաշտոնյաները, ներառյալ վարչապետն ու փոխվարչապետը, պետական խորհրդականները, նախարարներն ու մարզային ղեկավարները, ովքեր ընտրովի են և այլ երկրներում համարվում են քաղաքական պաշտոնյաներ, այստեղ համարվում են քաղաքացիական ծառայողներ:

Չինաստանի քաղծառայության համակարգը և՛ փակ է, և՛ բաց: Համակարգը փակ է «կապույտ» օձիքով աշխատողների համար, անկախ այն բանից՝ նրանք կառավարության մարմիններում են աշխատում, թե՛ ոչ:

«Սպիտակ» և «կապույտ» օձիքով աշխատողների համար կառավարման տարբեր ռեժիմների սահմանումը բխում է Չինաստանի ղեկավարների այն ընկալումից, ըստ որի՝ մտավոր և ֆիզիկական աշխատողները տարբեր ներդրումներ ունեն արտադրական արժեքների ստեղծման գործում և տարբեր կարիքներ:

1950-ականներից բոլոր մտավոր աշխատողներն ընդգրկվեցին մեկ համակարգի մեջ, որը կոչվում էր Կադրերի կառավարման համակարգ: Այն ղեկավարում էր կոմունիստական կուսակցությունը:

Քաղաքացիական ծառայության համակարգից դուրս են մնում նաև ծառայության ոլորտի /կրթություն, փոստ և հեռահաղորդակցություն, առողջապահություն/ ու պետական ձեռնարկությունների, ինչպես նաև տարաբնույթ հաստատությունների աշխատակիցները: Այս ոլորտների աշխատողներին ղեկավարում է Կադրերի կառավարման համակարգը: Չինաստանում քաղծառայողներին շարունակում են համարել «կադրեր»:

1966-1976թթ. Չինաստանի կոմունիստական կուսակցությունը երկրում իրականացրեց մշակութային հեղափոխություն: Կատաղի պայքար սկսվեց բյուրոկրատիայի դեմ: Արդյունքում՝ պետական բոլոր կադրային հաստատությունները վերացվեցին, և ՉԿԿ-ն իր վրա վերցրեց կադրերի և աշխատանքի նկատմամբ անմիջական վերահսկողությունը, ներառյալ քաղաքացիական ծառայության կառավարումը:

1978 թ. դեկտեմբերին կոմունիստական կուսակցությունը սկսեց իրականացնել տնտեսության լայնածավալ բարեփոխումներ, որոնք ուղեկցվում էին պետական կադրային հիմնարկների վերահաստատմամբ, ինչպես նաև կադրային համակարգի բարեփոխման անհրաժեշտության նկատմամբ մեծ ուշադրությամբ:

Չինաստանի նոր քաղաքացիական ծառայության համակարգը ներառում է որոշ նորամուծություններ. համակարգը բաց է և համալրվում է մրցույթների միջոցով, սակայն կուսակցության դերը, այնուամենայնիվ, շարունակում է մնալ որոշիչ: Քաղծառայողների ընտրությունը պայմանավորված է ոչ միայն քաղծառայողի արժանիքներով, այլև կուսակցության նկատմամբ օրինապահությամբ:

Քաղծառայության պաշտոնական կառավարումը հանձնված է Անձնակազմի նախարարությանը, որն աշխատում է կուսակցության վարչության ղեկավարության ներքո: ՉԿԿ Քաղբյուրոյի ավագ անդամը կառավարում է «Կազմակերպություն և կադրային աշխատանք» համակարգը, որտեղ ներառված է քաղծառայությունը:

Քաղծառայության զարգացումը

Ըստ էության՝ Չինաստանում քաղծառայողներ էին համարվում ղեկավարները կամ տեխնոկրատները, իսկ կառավարումն ընկալվում էր որպես ավանդական բյուրոկրատական երևույթ, որին բնորոշ է հսկողությունը: Մինչդեռ, կառավարումը ենթադրում է ճկունություն և արդյունավետություն:

Չինաստանի քաղծառայության համակարգի զարգացման վրա 20-րդ դարում ազդեցություն են ունեցել 2 հեղափոխությունները, օտարերկրյա ներխուժումները և քաղաքացիական պատերազմը: Նշվածներից յուրաքանչյուրը յուրովի է ազդել քաղծառայության համակարգի զարգացման վրա. կործանվեց կայսերական, ապա հանրապետական համակարգը, իսկ ճապոնացիների ներխուժման հետևանքով քաղծառայությունը քաղաքականացավ. ազգայնական կառավարությունը պայքարում էր՝ այդ համակարգի նկատմամբ հսկողություն հաստատելու համար: Քաղաքացիական պատերազմի տարիներն իրենց հերթին ձախողեցին

համակարգը բարեփոխելու և ավելի արհեստավարժ ու չեզոք քաղճառայության համակարգ ստեղծելու ջանքերը:

Քաղաքականացումը

Արդյո՞ք այդպիսի համակարգում քաղճառայությունը կարող է լինել չեզոք և պաշտպանված քաղաքական միջամտությունից: Չինաստանում իշխանության միակուսակցական համակարգը, պետության ղեկավարումը կոմունիստական քաղաքական էլիտայի կողմից բացառում է և՛ քաղաքական չեզոքությունը, և՛ պաշտպանվածությունը քաղաքական միջամտությունից:

Քաղճառայության կառավարման մեջ կուսակցության դերն առաջնակարգ է. քաղճառայության քաղաքականության իրականացումը դրված է կուսակցության կոմիտեի Կազմակերպության դեպարտամենտի՝ ԿԴ-ի վրա: Քաղճառայության համակարգում առաջխաղացումները կատարվում են «նոմենկլատուրային» համակարգի միջոցով: Համաձայն կուսակցության ներքին կանոնների՝ բոլոր ղեկավար պաշտոններում առաջխաղացումները նախապես ուսումնասիրվում են կուսակցության կոմիտեի ԿԴ-ի կողմից:

1979-ին Կազմակերպության դեպարտամենտն ընդունեց գնահատման 4 հիմնական չափանիշներ, որոնք որոշիչ դեր էին կատարելու քաղճառայողների ընտրության հարցում՝ բարոյական նկարագիր, կուսակցությանը և նրա ծրագրերին անվերապահ նվիրվածություն, մասնագիտական փորձ, ունակություններ և կարգապահություն:

Քաղճառայությունը, սակայն, շարունակում է մնալ քաղաքականացված այն չափով, որ կուսակցական օրինապահությունը գլխավոր չափանիշ է համարվում քաղճառայողների ընտրության հարցում:

Չինաստանում քաղճառայողները կարող են մասնակցել քաղաքականությանը, ինչպես մյուս քաղաքացիները, որոնց 18 տարին լրացել է և մասնակցել են ընտրություններին: Համաձայն Սահմանադրության՝ նրանք ունեն ազատ խոսքի, մանուլի, ասոցիացիաների, շքերթի և ցույցերի մասնակցելու իրավունք:

Ժամանակավոր կանոններով՝ քաղճառայողներին արգելվում է մասնակցել հակապետական գործունեության, ներառյալ՝ երթերի, ցույցերի, գործադուլների, ինչպես նաև միանալ օրենքով չթույլատրված կազմակերպությունների:

Բարեփոխումների իրականացում

Չնայած քաղճառայության ոլորտում բարեփոխումները կատարվել են 1980-ականների սկզբներին, վարչական բարեփոխումը սկսվել է դեռևս 1949-ին: 1993-ից սկսած՝ իշխանությունները ձեռնամուխ եղան նոր բարեփոխումների, որոնք բխում էին քաղճառայության դերի արմատական վերագնահատումից և պետության կառուցվածքը շուկայական տնտեսության զարգացմանը համապատասխանեցնելու կենսական պահանջից:

Բարեփոխումներ անցկացնելու հիմնական դրդապատճառներն էին 1978-ի տնտեսական բարեփոխումները, որոնք միտված էին տնտեսության զարգացմանը և կուսակցության օրինականության վերականգնմանը մշակութային հեղափոխությունից հետո: Գլխավոր ղեկավար Դենգ Խիապոնգը

1980 օգոստոսին կուսակցության օրակարգում դրեց երկրի ղեկավար համակարգի բարեփոխման պահանջը:

Կուսակցությունը քաղաքացիական համակարգի բարեփոխումների հարցը մտցրեց քաղաքական օրակարգ և վերահսկեց դրանց իրագործումը: Քաղաքացիական համակարգի ընդհանուր կառավարումը մտցրեց կոմունիստական կուսակցության վրա:

Քաղաքացիական բարեփոխումները ներառեցին հետևյալ հիմնական սկզբունքները.

- իրականացնել անրագրված պաշտոնավարում համակարգի բոլոր կադրերի համար: 1985-1987 -ին սահմանվեց պաշտոնաթողության անրագրված ժամկետ. նախարարների համար՝ 67 տարեկանի փոխարեն 59 տարեկան, կառավարիչների համար՝ 65-ի փոխարեն 55-ը՝ վերջիններիս ընդգրկելով քաղաքացիական համակարգում,

- կադրերի կրթական մակարդակը բարձրացավ. 1980-1984թթ. Չինաստանի համալսարանական կրթությամբ բարձրաստիճան ղեկավարների թիվը 20-38 տոկոսից հասավ 62-83-ի,

- քաղաքացիական համակարգի ղեկավարման համար հիմնվեցին նոր ինստիտուտներ: 1988-ին ստեղծվեցին Անձնակազմի նախարարությունը և այլ հաստատություններ, որոնք պետք է կյանքի կոչեին քաղաքացիական նոր համակարգ: 1993թ. Բեյջինգում հիմնվեց Ազգային վարչական դպրոց՝ շուկայական տնտեսությանը հարմար ուսումնական պլանով, որը վերապատրաստելու էր համապատասխան կադրեր քաղաքացիական նոր համակարգի համար,

- ընդունվեցին նոր դրույթներ քաղաքացիների նշանակման, առաջխաղացման, պաշտոնաթողության համալրման, գնահատման, պաշտոնի իջեցման և կոռուպցիայի մասին: Այս դրույթները լրացրեցին կադրային կառավարման կանոնները, որոնք հաստատվել էին ԿԴ-ի և Անձնակազմի նախարարության կողմից,

- բարեփոխումները սահմանեցին համալրման և ընտրության նոր եղանակ, որով պահանջվում էր բոլոր պաշտոնները լրացնել բաց մրցութային քննությունների միջոցով: Եվ վերջապես՝ բարեփոխումները նախատեսում էին քաղաքացիների վարձատրման մակարդակը որոշելու նոր մեթոդ: Բարեփոխումներն ուղղված էին՝ բարելավելու քաղաքացիական որակը, բարձրացնելու նրա դերն ու նշանակությունը հասարակության կյանքում:

Այս բարեփոխումները բարելավեցին երկրի բարոյական վիճակը. քայլեր ձեռնարկվեցին սանձելու կոռուպցիան:

Չինաստանի ղեկավարներն ուսումնասիրեցին շուկայական տնտեսության զարգացման արտասահմանյան փորձը դոնոր կազմակերպությունների կողմից կազմակերպված ուսումնական այցերի միջոցով /Համաշխարհային բանկ, UNDP/: 1980-ի վերջերին չին պաշտոնյաներն ուսումնասիրեցին Միացյալ Նահանգներում պաշտոնների դասակարգման համակարգը, քաղաքացիների տարեկան վարձատրման մակարդակը: Ընդհանուր առմամբ Չինաստանի իշխանություններն ընդունեցին բնութթվ չինական լուծումներ:

Քաղաքացիական ուրվագիծը

Չինաստանի միակուսակցական քաղաքական համակարգը ձևավորում է նրա քաղաքականության համակարգի ուրվագիծը:

1. Քաղաքականության համակարգը ղեկավարելու լիազորությունը կենտրոնացված է Չինաստանի կոմունիստական կուսակցության ձեռքում, որը ղեկավարում է քաղաքականության քաղաքականությունն ու ղեկավար պաշտոնյա քաղաքացիների առաջխաղացումը:

2. Քաղաքական մոնիզմի պայմաններում քաղաքացիները լիովին ենթակա են պետությանը, որը որոշում է նրանց աշխատանքային ժամկետներն ու պայմանները:

3. Կուսակցության դերն է գնահատել քաղաքացիների արժանիքները և քաղաքական օրինապահությունը՝ քաղաքական ճգնաժամերի ժամանակ ընտրության չափանիշ դարձնելով միայն քաղաքական հավատարմությունը:

4. Չինաստանի տնտեսության զարգացման ցածր մակարդակը հանգեցրել է քաղաքացիների հաստիքների ուճացման և ցածր վարձատրման, որն էլ նպաստում է կոռուպցիայի աճին:

Ներկայումս Չինաստանում զարգանում է շուկայական տնտեսությունը: Պետությունը, որպես տնտեսությունը կարգավորող, ստանձնել է այն վարողի չեզոք դեր: Ջանքեր են գործադրվում՝ վերացնելու պետության և հասարակության միջև առկա անջրպետները. դա պետությանը հնարավորություն կտա ավելի արդյունավետ իրականացնել իր դերը՝ հիմնելու քաղաքականության նոր համակարգ, որը կնպաստի կոռուպցիայի նվազեցմանը և քաղաքացիների եկամուտների վերահսկմանը:

Պատրաստեց ժակլին ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԷԼ



Վիլի Եդիգարյանը ընթերցողին է ներկայացրել կառավարման ոլորտին առնչվող երկու ձեռնարկ: «Կառավարում. սոցիալ-հոգեբանական ասպեկտ» գիրքը անդրադառնում է կառավարման սոցիալ-հոգեբանական խնդիրներին: «Այսօրվա պայմանները ցանկացած աստիճանի ղեկավարից պահանջում են հիմնարար գիտելիքներ և՛ նեղ մասնագիտության մեջ, և՛ տնտեսության, աշխատանքի կազմակերպման ու կառավարման, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական բնագավառներում:

Կառավարումը նախ և առաջ մարդկանց ղեկավարումն է, իսկ դրա համար հարկ է խորապես իմանալ մարդու՝ նրա ապրած ժամանակաշրջանի, վարքի օրինաչափությունները, անհատների հոգեբանական կերտվածքի ձևավորման ու կատարելագործման տարբերությունները, որոշակի միջավայրում նրանց հաղորդակցման առանձնահատկությունները»,- ասված է գրքի ներածության մեջ:

Ձեռնարկում լուսաբանված են կառավարչական գործունեության առանձնահատկությունները, ղեկավարի անձնային և սոցիալ-հոգեբանական հատկանիշները:

Հեղինակի հաջորդ ձեռնարկը «Կառավարման և ինքնակառավարման տեխնոլոգիաներ» գիրքն է:



Այն կառավարման և ինքնակառավարման տեխնոլոգիաներին նվիրված առաջին հայերեն հրատարակությունն է: Ձեռնարկի հիմնական նպատակն է քաղաքացիական և մունիցիպալ ծառայողների որակավորման բարձրացման ու վերապատրաստման նպատակով ներկայացնել կառավարման և ինքնակառավարման տեխնոլոգիաների ամբողջական ու համակարգված գիտելիքներ, խմբային ուսուցմանը համապատասխան մեթոդներ: Ձեռնարկները նախատեսված են պետական կառավարում և պետական ինքնակառավարում

մասնագիտությունն ընտրած ուսանողների, դասախոսների, մունիցիպալ, քաղաքացիական ծառայողների որակավորման բարձրացման ու վերապատրաստման դասընթացների համար:

Երկու ձեռնարկների տպագրությանն աջակցել է Գերմանական տեխնիկական համագործակցության կազմակերպության (GTZ) «Համայնքների զարգացման խրախուսման ծրագրի» ղեկավարությունը:

Լույս է տեսել ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հանրային կառավարում» ամսագրի անդրանիկ համարը:



Գիտական ամսագրի միացյալ երկու համարները նվիրվում են Ակադեմիայի հիմնադրման տասնամյակին: Այս պարբերականի նպատակն է իր էջերում լուսաբանել հանրային կառավարման բնագավառում մարդկության կուտակած փորձը, ոլորտի մասնագետների հոդվածների և ուսումնասիրությունների միջոցով անդրադառնալ Հայաստանում պետական կառավարման ոլորտի խնդիրներին, հանրության ուշադրությանը ներկայացնել կառավարման ոլորտն ուսումնասիրող գիտնականների աշխատությունները:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայում հետբուհական ուսուցման գործընթացներն ամբողջացնելու և նրա գործունեության արդյունավետությունը բարձրացնելու գործում կարևոր դեր կունենա «Հանրային կառավարում» ամսագիրը, որտեղ գիտական հոդվածներով կարող են հանդես

զալ ոչ միայն գիտական աստիճան ունեցող մասնագետները, այլև հայցորդները, ասպիրանտները և դոկտորանտները:

Ամսագրի խմբագրական խորհուրդը գլխավորում է իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Հարությունյանը:

ՄԵԾԵՐԻ ԴԱՍԵՐԸ

Ես կցանկանայի, որ հայ ժողովուրդը լիներ ինքնավստահ, բարձր պահեր ազգային արժանապատվությունը:

Կցանկանայի, որ նա մայրենի լեզվի պաշտամունքն ունենար: Ավելի գիտակից կառչեր հայրենի հողին:

Կցանկանայի, որ նա խնամքով պահեր իր հինավուրց կուլտուրայի կոթողները և դրանցով հպարտանար:

Կցանկանայի, որ մեր արվեստը և գրականությունը ազգային կոլորիտի և ձևերի միջով արտահայտեին համամարդկային զգացմունքներ ու մտքեր, կերտեին արժեքավոր գործեր և կերպարներ:

Կցանկանայի անցյալի հին, հրակայուն և ամուր խարիսխների վրա բարձրանար հայ ժողովուրդը, նորոգվելով և վերանորոգվելով առաջանար և ետ չմնար արդիական գիտությունների և կուլտուրայի պրոգրեսի առաջամարտիկների շարքից:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ